05 FEB 2007

ՀԱՅԱՍ[illegible]ՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բոլոր յերկիրների պրոլետարներ—միացե՛ք:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ընդունված Բանվորական, Գյուղացիական, Կարմիր Բանակային-ներու յեվ Նավաստիներու Խորհուրդներու Անդրկովկասյան 1922 թ. Դեկտեմբերը 13ի Համագումարեն յեվ հրատարակված Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1923 թ. Հունվար 16ի Նստաշրջանին.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

342(47.92)
Ա-11

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 51
Կ. ՊՈԼԻՍ 1923

2013
34913
342(47.92)
Ա-11
MAR 2010
340
1804-ՍԱ

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐՈՒ ՄԻՅԱՑՈՒՄԸ

ՀՈԴ. 1 — Ռուսաստանի պրոլետարներու հոկտեմբերյան հեղափոխությունը, դրամատերերու յեվ կալվածատերերու դասակարգային ճնշումներեն աշխատավորները ազատագրելով, նախկին ցարական կայսրության ճնշված ժողովուրդներուն ալ ազատություն բերավ, անոնց ինքնորոշման, մինչեվ իսկ պետականորեն անջատման իրավունք տալով:

Անդրկովկասի իշխող դասակարգերը, իրենց բուրժուա յեվ կալվածատիրական կուսակցություններով, ոգտագործեցին այդ իրավունքը, իրենց քաղաքական յեվ տնտեսական տիրապետությունը ամրապնդելու համար յեվ Գերման-Տաճկական իմպերիալիստներու թելադրանքով, նախ Անդրկովկասը բանվորա-գյուղացիյական Ռուսաստանեն անջատեցին, կազմելով Անդրկովկասյան Հանրապետություն, Սեյմի * գլխավորությամբ, ապա՝ միյացյալ Անդրկովկասը կտրտեցին յերեք մասի յեվ յուրաքանչյուրը բաժնվելով՝ մտավ իր ազգային հանրապետության մեջ: Այսպես Ադրբեյջանի, Վրաստանի յեվ Հայաստանի բուրժուա-կալվածատիրական իշխող կուսակցությունները դաշնակցելով Ռուսաստանի հակահեղափոխական տարրերուն յեվ

---

* Սեյմ — Խորհրդարան:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽՌ- рм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
14553
(9/92)

իմպերիալիստական համաձայնության անհաշտ պայքար մը բացին խորհուրդային իշխանության դեմ ու այդ յերկիրներու ժողովրդական զանգուածները արյունոտ կռվի մեջ նետեցին, զանոնք իրարու դեմ գրգռելով, ազգային ատելություն յեվ թշնամություն հրահրելով:

ՀՈԴ. 2 — Հեղափոխական խորհուրդային հեղաշրջումը միայն կրցավ տապալել ենշողներու տիրապետությունը յեվ բանվորներու ու գյուղացիներու տիրապետություն հաստատելով, Անդրկովկասի ժողովուրդներուն բերավ խաղաղություն յեվ յեղբայրական համակեցություն ու ընդհանուր թշնամիի դեմ միացյալ պայքարի հող ստեղծեց:

Այդ հողի վրայ, Անդրկովկասյան հանրապետությանց յեվ այդ հանրապետությանց մեջ մտնող ինքնավար շրջանների * աշխատավորները, համաձայն ու համաչափ աշխատանք վարելով տնտեսությունը վերականգնելու, ներսի յեվ դուրսի թշնամիներուն դեմ պաշտպանվելու նպատակով ստեղծեցին Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհուրդային Հանրապետության Դաշնակցությունը:

ՀՈԴ. 3 — Այդ Դաշնակցությունը Անդրկովկասյան ժողովուրդներու ազգային խաղաղության յեվ առավելապես մերձեցման գործը շարունակելով տնտեսական յեվ պետական շինարարության բնագավառներու մեջ դրական հետևանքներու հասած է: Սակայն հաշվի առնելով Արդրկովկասյան խորհուրդային հան-

* Աջարիստան, Արխազիյա յեվ Ոսեթիյա — Վրաստանի մեջ ինքնավար շրջան են, իսկ Նախիջեվանի յեվ Ղարաբաղի շրջանները — Ազրբայջանի մեջ.

բապետությանց վիճակը, միջազգային բուրժուաներու կողմն անոնց բոյկոտի յենթարկված ըլլալը, յեվ իմպերիալիստական պետություններու հնարավոր հարձակման սպառնալիքին տակ ըլլալը. Անդրկովկասյան հանրապետություններու աշխատավորները, քաղաքական, տնտեսական յեվ ռազմական ավելի սերտ միացումը անհրաժեշտ յեվ պատեհ սեպեցին: Այդ նպատակով Անդրկովկասյան բոլոր հանրապետությանց լիազոր ներկայացուցիչները հավաքվելով Անդրկովկասյան հանրապետության Խորհուրդներու Առաջին Համագումարի մեջ վորոշեցին կազմել Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետություն: (Ա. Ս. Ֆ. Խ. Հ.)

ՀՈԴ. 4 — Հավասարիմ բանվորական զանգվածներու ավանդությանց դեպի համերաշխություն ու յեղբայրական միացում, Անդրկովկասյան աշխատավորները միաժամանակ հանդիսավոր կերպով ի լուր համայն աշխատավոր մարդկության կը հայտարարեն իրենց լիակատար պատրաստակամությունը Խորհուրդային Հանրապետություններու բանվորներու յեվ գյուղացիներու հետ համաշխարհային կապիտալի դեմ մեկ ճակատ ստեղծելու համար: Ատկե մեկնելով Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետությունը անհետաձգելի կը համարե Դաշնակցական Սոցիալիստական Խորհուրդային Հանրապետությանց կազմակերպությունը, զոր բոլոր խորհուրդային յերկիրներու համաշխարհային հզոր դաշնակցության նախատիպարն է:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Բ.

ԲԱՆՎՈՐՆԵՐՈՒ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՈՒ, ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐՈՒ ՅԵՎ ՆԱՎԱՍՏԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 5 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության պետական գերագույն իշխանությունը կը պատկանի Բանվորներու, Գյուղացիներու, Կարմիր Բանակայիններու յեվ Նավաստիներու Խորհուրդներուն Անդրկովկասյան Համագումարին:

ՀՈԴ. 6. — Անդրկովկասյան Խորհուրդներու համագումարը կը կազմվի քաղաքային խորհուրդներեն—3000 ընտրողի մեկ պատուիրակի հաշվով—յեվ գավառային խորհուրդներու համագումարներու ներկայացուցիչներեն—15000 բնակիչ մեկ պատվիրակ կը ներկայացնե:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Յեթե Հանրապետությանց Խորհուրդներու Համագումարը Անդրկովկասյան Համագումարեն առաջ տեղի ունենա, վերջինին պատվիրակները Հանրապետության Համագումարի կողմե կրնան ընտրված ըլալ:

ՀՈԴ. 7 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն տարին մեկ անգամ կը գումարե Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարը:

ՀՈԴ. 8 — Անդրկովկասյան Խորհուրդներու Արտակարգ Համագումարը կը գումարվի Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին նախաձեռնությամբ յեվ կամ Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհուրդային Հանրապետության կազմի մեջ մտնող հանրապետություններեն մեկին կամ միյուսին Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի պահանջով:

ՀՈԴ. 9 — Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարը կընտրե Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտե վոր կբաղկանա 150 անդամներե յեվ 50 փոխ-անդամներե:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 10 — Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարներուն միջեվ անցնող ժամանակամիջոցին Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության գերագույն իշխանությունը կը ներկայացնե Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն:

ՀՈԴ. 11 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն լիյովին պատասխանատու յե Անդրկովկասի Խորհուրդներու Համագումարին:

ՀՈԴ. 12 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն գերագույն որգանն է՝ Որենսդիր, Վարչական յեվ Կոնտրոլի իշխանությանց:

ՀՈԴ. 13 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընդհանուր ուղղություն կուտա բանվորա-գյուղացիական կառավարության յեվ Անդրկովկասի Խորհուրդային իշխանության բոլոր որգաններու գործունեության, կամիտին յեվ կը համաձայնեցնե որենսդրական աշխատանքը յեվ կը հսկե Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության Սահմանադրության կյանքի մեջ կիրարկմանը, ինչպես նայեվ Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարներու յեվ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության բոլոր որգաններու վորոշումներուն:

ՀՈԴ. 14—Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կը քննե յեվ կը հաստատե Անդրկովկասյան ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին յեվ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության պետական առանձին որգաններու կողմե յեղած որենքներու նախագիծերը յեվ այլ առաջարկները, նույնպես նայեվ իր կողմե կը հրատարակե որենքներ յեվ հրամաններ:

ՀՈԴ. 15 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր գործունեության համարատվությունը ինչպես նայեվ ընդհանուր քաղաքականության յեվ առանձին հարցերու մասին զեկույցներ կը ներկայացնե Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարին:

ՀՈԴ. 16 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կընտրե Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը, վոր կը բաղկանա 3 անդամներե յեվ 6 փոխ-անդամներե. անդամներուն յերեքը կընտրվին նախագահ յեվ մեկը՝ քարտուղար:

ՀՈԴ. 17 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը 4 ամիսը անգամ մը նիստի կը հրավիրե Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն: Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն արտակարգ նիստի կը հրավիրվի, ա—Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության նախաձեռնությամբ, բ—Անդրկովկասի ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին առաջարկությամբ, գ—Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամներու մեկ յերրորդին պահանջումով:

ՀՈԴ. 18 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը՝

Ա. Կը ղեկավարե Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերը:

Բ Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերուն համար նյութեր կը պատրաստե:

Գ Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քննության կենթարկե որենքներու նախագիծերը:

Դ Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշումներու գործադրության կը հսկե:

Ե Անդրկովկասի Կենտրոնական Կոմիտեյի նիստերու միջեվ անցնող ժամանակամիջոցին Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անունով որենքներ յեվ վորոշումներ կը հրատարակե, վերջինին հաշիվ տալու պայմանով:

Զ. Անդրկովկասի Կենտրոնական Կոմիտեյի անունով հարաբերության մեջ կը մտնե:

Է. Ներման մասին խնդիրներ կը քննե, կարմիր Դրոշակի շքանշանի շնորհումները կը հաստատե յեվ վարչական զանազան խնդիրներ կը կարգադրե:

Ը. Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերուն միջեվ անցնող ժամանակամիջոցին, իրավասու յե Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին վորոշումները հաստատելու, ինչպես նայեվ անոր վորոշումներն ու վճիռները կասեցնելու, անոնց քննությունը Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի մերձավոր նստաշրջանին փոխանցելով:

Թ. Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին առաջարկությամբ Ժողովրդական Կոմիսարներ կը նշանակե:

Ժ. Առաջնորդող կենտրոն կհանդիսանա, հրահանգելով վողջ աշխատանքը ինչպես ֆեդերալ իշխանության որգաններուն, այնպես ալ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության կազմին մեջ մտնող հանրապետությանց Կենտրոնական Գործադիր Կոմիտեներուն:

ՀՈԴ. 19 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերուն բոլոր խնդիրները կը վորոշվին բաց քվեարկությամբ յեվ ձայներու պարզ մեծամասնությամբ: Անվանական քվեարկություն կը կատարվի յերբ Անդրկովկասյան Կենտրոնական Կոմիտեյի վոչ պակաս քան քսան անդամներ գրավոր կերպով հայտարարեն:

ՀՈԴ. 20 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության ընդհանուր գործերը կառավարելու համար Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կը կազմե Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը, նույնպես նայեվ առանձին Ժողովրդական Կոմիսարներ յեվ այլ որգաններ կառավարության զանազան ճյուղերուն համար:

ՀՈԴ. 21 — Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամները կաշխատին Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու յեվ այլ որգաններու մեջ կամ Անդրկովկասյան Կենտրոնական Կոմիտեյի հատուկ հանձնարարություններ կը կատարեն:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 22 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության Կառավարության գլուխը կանգնած է Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը:

ՀՈԴ. 23 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը կը կազմվի՝ նախագահեն, յերկու տեղապահներեն յեվ հետեվեալ Ժողովրդական Կոմիսարություններեն՝ Ա.—Արտաքին Գործոց, Բ.—Ռազմա-Ծովային, Գ.—Արտաքին Առեվտուրի, Դ.—Հաղորդակ-

ցության, Ե—Պարենավորման, Զ—Յելմտական, Է—Բանվորա-Գյուղացիական Տեսչության, Ը—Աշխատանքի յեվ Թ—Պոստ-Հեռագրական:

Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդի կազմին մեջ վճռողական ձայնի իրավունքով կը մտնե, հակահեղափոխության, սպեկուլասիոնի յեվ հանցավոր պաշտոնյաներու դեմ կռվող Անդրկովկասյան Արտակարգ Կոմիսիյոնի Նախագահը:

ՀՈԴ. 24. — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին կից կը կազմվի, Գերագույն Տնտեսական Խորհուրդ, վորպես որգան Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության տնտեսության ուղղություն տվող յեվ Հանրապետությանց Ժողովրդական Տնտեսության Խորհուրդներու ու Հանրապետությանց Տնտեսական Խորհուրդներու աշխատանքը ղեկավարող:

ՀՈԴ. 25 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը իր նպատակը իրականացնելու համար կը հրատարակե որենքներ, կարգադրություններ, հրահանգներ յեվ առհասարակ ծեռք կառնե միջոցներ վորոնք պետական կյանքի կանոնավոր յեվ արագ ընթանալուն համար անհրաժեշտ են:

ՀՈԴ. 26 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդի բոլոր խոշոր հասարակական-քաղաքական նշանակություն ունեցող վորոշումները Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քննության յեվ հավանության կը ներկայացվին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Սույն հոդվածին մեջ հիշված միջոցները, վորոնք անմիջական կարգադրություն կը պահանջեն Անդրկով-

կասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին կողմե անմիջապես կրնան իրագործվիլ:

ՀՈԴ. 27 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը լիյովին պատասխանատու յե Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին:

ՀՈԴ. 28 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարները լիյովին պատասխանատու յեն Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին յեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին:

ՀՈԴ. 29 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարյատներում կը կազմվին Կոլլեգիյաներ Ժողովրդական Կոմիսարի Նախագահությամբ, վորուն անդամները Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին կողմե կը հաստատվին:

ՀՈԴ. 30 — Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարը առ ի գիտություն կոլլեգիյային հայտնելով իրավատու յե անձնապես վորոշումներ ընել այն բոլոր հարցերու նկատմամբ վոր համապատասխան Կոմիսարիյատի իրավասության տակ են: Յեթե կոլլեգիան Ժողովրդական Կոմիսարին այս կամ այն վորոշումին համաձայն չըլլա, առանց կասեցնելու վորոշման կիրարկումը կրնա վերաքննության դիմել Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին կամ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության: Վերաքննության դիմելու նույն իրավունքը կը պատկանի նայեվ կոլլեգիայի ատանձին անդամներուն:

ԳԼՈՒԽ Ե.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 31 — Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարին յեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշումին յենթակա յեն ընդհանուր պետական նշանակություն ունեցող բոլոր խնդիրները, այսինքն՝

Ա. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության Սահմանադրության հաստատումը, փոփոխումը յեվ լրացումը:

Բ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության կազմի մեջ նոր պետական մարմիններ ընդունելու յեվ առանձին անդամներուն կազմին մեջեն դուրս յելելու թույլտվություն տալը:

Գ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության հողամասին վրա, ամբողջ ժողովրդական տնտեսության յեվ անոր առանձին ճյուղերու հիմերն ու ընդհանուր ծրագիրը հաստատելու յեվ մենաշնորհներու (քոնսեսիոն) պայմանագրությանց քննություն կատարելը:

Դ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության բյուջեյի հաստատումը:

Ե Ֆեդերալ յեվ տեղական տուրքերու սահմանումը նայեվ Ֆեդերալ Պետական Դրամատան հաստատումը:

Զ Ֆեդերալ Գերագույն Դատարանի կազմակերպությունը:

Է Հողաբաժանումի յեվ հողն ոգտագործելու սկզբունքներու սահմանումը, նմանապես Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության բովանդակ հողամասերուն հանքերու շահագործումը:

Ը Հանրապետությանց Խորհուրդներու Համագումարներու յեվ Հանրապետությանց Կենտրոնական Գործադիր Կոմիտեներու յեվ Հանրապետությանց Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդներու վորոշումներու բեկանումը, յերբ անոնք կը խախտին Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության Սահմանադրությունը:

Թ Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին առանձին անդամներու, ինչպես նայեվ ամբողջ կազմին նշանակումը յեվ փոխարինումը, նույնպես Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին նախագահին յեվ փոխ-նախագահներուն հաստատումը:

Ժ Ներման իրավունք:

Ի Ֆեդերալ վիճակագրության կազմակերպությունը:

Լ. Դատաստանի կազմակերպության յեվ դատավարության հիմը հաստատելու, նույնպես նայեվ քաղաքացիական յեվ քրեական որենադրությունն հաստատելու:

խ Տեղական բնույթ կրող ներքին փոխառության իրավունք:

ՀՈԴ. 32—Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարին բացառիկ իրավասության յենթակա յե Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության հիմունքները հաստատել, լրացնել յեվ փոփոխել:

ՀՈԴ. 33 — Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին այն ատեն միայն կը թույլատրվի 32րդ հոդվածին մեջ հիշված խնդրին լուծումը յերբ անկարելի ըլլայ Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարը գումարել:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Զ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐՈՒ ՅԵՎ ԱՆՈՐ ԿԱԶՄԻՆ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆՑ ՅԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 34 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության կազմին մեջ մտնող հանրապետություններու գերագույն իշխանությունը Խորհուրդներու Համագումարներն ու Կենտրոնական Գործադիր Կոմիտեններն են, վորոնք այդ

14533

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ...
С.С.Р.А Публичная Би...
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

հանրապետությանց սահմանադրության համաձայն կընտրվին յեվ կը գործեն:

ՀՈԴ. 35 — Հանրապետությանց Խորհուրդներուն Համագումարներուն յեվ Կենտրոնական Գործադիր Կոմիտեններուն իրավասության մեջ են հանրապետական բնույթ ունեցող բոլոր հարցերը, բացի անոնցմե վորոնք Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարին յեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին իրավասության յենթարկված են:

ՀՈԴ. 36 — Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհուրդային Հանրապետության կազմին մեջ մտնող Հանրապետությանց կառավարության գլուխը՝ Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդն է, հետևյալ կազմով —Ներքին գործոց, Արդարադատության, Լուսավորության, Յերկրագործության, Առողջապահության յեվ Սոցիալական Ապահովության: Ժողովրդական Կոմիսարներու կազմին մեջ կը մտնեն նայեվ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության լիազորները խորհրդակցական ձայնի իրավունքով:

ՀՈԴ. 37—Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարներու լիազորները հանրապետությանց մեջ կնշանակվին Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարներեն համաձայնությամբ համապատասխան Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին:

Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության Ժողովրդական Կո-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ- рм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

միսարներու լիյազորները հանրապետության մեջ առանց վոր յեվ և առարկության կը գործադրեն իրենց Ժողովրդական Կոմիսարներու հրահանգներն ու կարգադրությունները, յեվ նույն ատեն իրենց ամենորյա աշխատանքի մասին հաշիվ կուտան համապատասխան հանրապետության Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին:

ՀԱՏՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Է.

ԲՅՈՒՋԵՅԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՈԴ. 38 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության յելքն ու մուտքը կը կազմե համապետական բյուջե:

ՀՈԴ. 39 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության կազմին մեջ մտնող հանրապետության պետական յելքն ու մուտքը, վորոշված Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հատուկ վճիռով, կը կազմեն հանրապետության բյուջեները վոր կը հաստատվի Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին կողմե յեվ վորպես մասնիկ կը մտնե Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության ընդհանուր պետական բյուջեյի մեջ:

Այն պարագային յերբ առանձին հանրապետությանց մեջ յելքը ավելի մեծ և քան մուտքը, բացը կը զոցվի Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության սնդուկեն:

ՀՈԴ. 40 — Տեղական տնտեսությանց յելքն ու մուտքը ինչպես նայեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին մասնավոր վորոշումով գավառներուն յեվ քաղաքներուն հանձնված յելքն ու մուտքը ի մի կը բերվին յեվ կը կազմեն Գավառական Խորհուրդներու տեղական բյուջեները, յեվ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի յատուկ վորոշումով—Քաղաքներու Խորհուրդներու տնտեսությունները կը բաժնվին գավառներեն վորպես ուրույն տնտեսական միություններ: Տեղական բյուջեները կը հաստատվին համապատասխան հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին կողմե:

ՀՈԴ. 41 — Անդրկովկասյան Խորհուրդներու Համագումարը կամ Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն տուրքերու յեվ հասույթներու տեսակները յեվ անոնց սահմանները կը հաստատե յեվ կվորոշե թե ինչ է յելք ու մուտքը, յեվ այդ յելեվ-մուտքին վոր մասերը պիտի մտնեն ընդհանուր պետական բյուջեյի յեվ տեղական բյուջեներու մեջ:

ՀՈԴ. 42—Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհուրդային Ֆեդերատիվ Հանրապետության կազմի մեջ մտնող հանրապետությունները տեղական տուրքեր կը հաստատեն վորոնք 41րդ հոդվածի մեջ սահմանված կարգով չեն հաստատված, բացառապես իրենց յեվ տեղական բյուջեներու ծախսերը ծածկելու նպատակով, սակայն Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախորոք թույլտվությամբ:

ՀՈԴ. 43 — Պետական Սնդուկի միջոցներեն վոչ մեկ ծախք կրնա արվիլ յեթե պետական բյուջեյին մեջ հատուկ վարկ չըլլա յեվ կամ Անդրկովկասյան Կենտ-

րոնական Գործադիր Կոմիտեն հատուկ վորոշում չարձակե:

ՀՈԴ. 44 — Ընդհանուր Պետական յեվ հանրապետության բյուջեներուն մեջ նախատեսված բոլոր վարկերը կը ծախսվին նախահաշիվներու ստորաբաժանումներու սահմաններուն մեջ յեվ ուղղակի իր նպատակին, յեվ չեն կրնար ուրիշ պետքեր հոգացվելու ծախսվիլ առանց Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի յեվ Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին հատուկ վորոշումին: Տեղական բյուջեներուն մեջ սահմանված վարկերը կը ծախսվին նմանապես տեղական նախահահաշիվներու ստորաբաժանումներու սահմաններուն մեջ ուղղակի նպատակին յեվ չեն կրնար ծախսվիլ ուրիշ պետքերու բավարարություն տալու, առանց հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեներու յեվ Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդին հատուկ վորոշումին :

ՀԱՏՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ը.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՅԵՎ ԴՐՈՇԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 45 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության զինանշանի վերի մասը բաղկացած ե լեռնաշղթայի յեվ ծագող արեվու ֆոնի վրա մանգաղի եւ մուրճի նկարներեն, վորոնք տեղավորված են խաչաձեվ, յերախակալները տակը, իսկ անոնց վրա հինգանկյուն կարմիր աստղ: Զինանշանի ներքին մասը յերեքգագաթյան լեռան ստորոտին վրա նկարված են՝ աջ կողմեն—նավթի բուրգեր, ձախ կողմեն, գործարան, վորուն ծխնելույզեն ծուխ կելլե յեվ կենտրոնին մեջ՝ խաղողի վորթ, բամբակ, բրինձ, յեգիպտացորեն յեվ ցորենի հասկեր: Զինանշանը շրջապատված ե կարմիր ժապավենով, վորուն վրա վոսկի գիրերով գրված ե ձախեն աջ՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն յեվ թուրքերեն—«Ա. Ս. Ֆ. Խ. Հ.»: Ժապավենով շրջապատված ներքին մասին մեջ, վոսկի ֆոնի վրա, գրված ե.—«Պրոլետարներ բոլոր յերկիրներու—միացե՛ք» լոզունգը:

ՀՈԴ. 46 — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդային Հանրապետության դրոշակը—կարմիր կտավ ե, վորուն անկյունը, փայտին կից, վերի մասին վրա աղեղնաձեվ տեղավորված են «Ա. Ս. Ֆ. Խ. Հ.» տառերը, իսկ անոնց գլխուն վրա, ձախ անկյունը, կարմիր-վոսկեգույն յեզերքներով հինգանկյուն աստղ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽՌ- рм.ССР
им. . . Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՀԱՏՎԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Թ.

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐՈՒ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴ. 47 — Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհուրդային Հանրապետության բոլոր պետական կենտրոնական հիմնարկությանց կենտրոնատեղին Թիֆլիս քաղաքն է վորոշված:

Սույն Սահմանադրությունը ընդունված է Բանվորական, Գյուղացիական, Կարմիր Բանակայիններու յեվ Նավաստիներու խ ռհուրդներու Պատգամավորներու Համագումարին կողմէ 1922 թ. Դեկտեմբեր 13ին յեվ հրատարակված է Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Առաջին Նստաշրջանի վորոշումով 1923 թ. Հունվարի 16ին:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Առաջին Նստաշրջանի Նախագահություն՝

ԱՂԱՄԱԼԻ ՈՂԼԻ, Ա. ԳԵԳԵՉԿՈՐԻ, Տ. ՀՈՒՍԵՅՆՈՎ, Ս. ԿՈՒԼՈՎ, Ս. ՍՏՈՒՐՈՒԱ, Շ. ԵԼԻՅԱՎԱ, Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Ա. ԳԻՆԶԲՈՒՐԳ, Ս. ԿԻՐՈՎ, Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ, Մ. ՅԽԱԿԱՅԱ, Ս. ՅԱԿՈՒԲՈՎ.

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝ *Բ. ՏԱԼԲԵԼԻ*

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0217334

917

34.913